



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Փետրվարի 5-ին

Նորած քահանաներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մախորդ օրը Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական կոչման արժանացած տասնմեկ քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանի:

Ձեռնադրող Օշական սրբազանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, իր երախտագիտությունը հայտնեց քահանայական ձեռնադրություն կատարելու պատվին արժանացնելու համար:

Նորած եկեղեցականների անունից Հայոց Հայրապետին երախտագիտության խոսք ասաց Տ. Կոմիտաս քնն. Ղևոնդյանը՝ հավաստիացնելով, որ ամեն ջանք կներդնեն իրենց նվիրյալ ծառայությունը բերելու Հայ եկեղեցու անդաստանում:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց նորած հոգևորականներին՝ շնորհավորելով վերջիններիս քահանայական ձեռնադրության առիթով:

Վեհափառ Հայրապետը հորդորեց նորընծա եկեղեցականներին հոգևոր կոչման բարձր գիտակցությամբ ու սիրով լծվել

իրենց առաքելությանը՝ էլ ավելի բարձրացնելով Հայ եկեղեցու բարի համբավն ու հեղինակությունը:

Հայոց Հովվապետն ընդգծելով, որ Հայաստանն ու հայ ժողովուրդն ապրում են դժվարին ժամանակաշրջանում, պատգամեց նորածներին արդյունավորել իրենց հոգևոր սպասավորությունը՝ հոգեխնամ ու կրթադաստիարակչական գործունեությամբ, Ավետարանի և սուրբ հայրերի պատգամների համաձայն հայորդիների մեջ հաստատել ու զորացնել սերը Հայ եկեղեցու և հայրենիքի նկատմամբ:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ քահանա հայրերն իրենց զորավոր հավատքով, նվիրյալ ու անսակարկ ծառայությամբ կկարողանան իրականություն դարձնել հայ ժողովրդի զավակների իղծերն ու տեսիլքներն ապագայի նկատմամբ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց ձեռնադրող սրբազան հորը, ինչպես նաև Մայր Աթոռի հոգևոր կրթական հաստատություններին ու լուսարարապետությանը՝ եկեղեցականների պատրաստության և ձեռնադրության գործում ներդրած ջանքերի համար:

Վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց քահանա հայրերին և ընծայեց «Մաշտոց» ծիսարաններ:

15-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղ և արդյունավոր հովվապետության երկար տարիներ:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը, որի ակունքներում կանգնած են մաս երկու եկեղեցիները: Վեհափառը վստահությամբ արձանագրեց, որ հավատն այն ամուր հիմքն է, որով ժողովուրդներն արժանապատվորեն կհաղթահարեն իրենց առջև ծառացած մարտահրավերները՝ վերականգնելով իրենց կյանքում բաղձալի խաղաղությունը:

Նորին Սրբությունն անդրադարձավ հայ ժողովրդի համար դժվարին այս շրջանում Ռուս եկեղեցու հովվապետի ցուցաբերած աղոթական զորակցությանը և ներդրած ջանքերին՝ ուղղված արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, ինչպես նաև Արցախի հայկական հոգևոր-մշակութային

րազմների փորձության միջով անցնող ժողովուրդներին:

Ակսիյ արքեպիսկոպոսը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Նորին Սրբությանը փոխանցեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի եղբայրական ողջույններն ու աղոթքները: Երևանի և Հայաստանի թեմի ժամանակավոր կառավարիչը վստահեցրեց Հայոց Հայրապետին, որ պիտի ամենայն ջանք գործադրի ռուսական համայնքի հոգևոր խնամքի կազմակերպման և երկու ժողովուրդների ու եկեղեցիների միջև հարաբերությունների առավել սերտացման համար:

Վերջում Նորին Սրբությունը վերստին իր բարեմաղթանքները բերեց թեմի նորանշանակ ժամանակավոր կառավարիչին՝ աղոթելով, որ Աստված զորակից ու օգնական լինի նրան իր առաքելության մեջ:



ժառանգության անխաթար պահպանմանը: Հայոց Հայրապետը ցավով արձանագրեց, որ այսօր, երբ հայաթափված է Արցախը Ադրբեջանի կողմից, շարունակվում են ոտնձգությունները հայկական սրբավայրերի նկատմամբ, փաստագրված են մաս սրբատեղիների ոչնչացման դեպքեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ երկնավոր Տերը զորավիգ լինի պատե-

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արք. Ներսիսյանը և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Շահե ծ. վրդ. Ամանյանը:

Փետրվարի 10-ին

ՌՈՒՍ ԵԿԵԼԵԳՈՒ՝ ԵՐԼԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱՐՔԵԱՓԻՍԿՈՊՈՍ ԱԿՍԻՅԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուս Ուղղափառ եկեղեցու՝ Երևանի և Հայաստանի թեմի ժամանակավոր կառավարիչ, Պողոսյան և Լյուբերեցկի արքեպիսկոպոս Ակսիյին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերեց արքեպիսկոպոս Ակսիյին՝ նշանակման առթիվ՝ մաղթելով արդյունավոր առաքելու-

թյուն ի նպաստ Հայաստանում ռուսական համայնքի հոգևոր կյանքի զորացման և երկու եկեղեցիների միջև եղբայրական հարաբերությունների առավել ամրապնդման:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն իր ողջույններն ու շնորհավորանքները փոխանցեց նաև Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին՝ գահակալության

Փետրվարի 14-ին

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԱՏՎԻԱՅԻ ՂԵՍԱԿԱՆԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լատվիայի Հանրապետության Մոնթենեպոլի արտակարգ և լիազոր դեսպան Էդիթ Մեդնիցին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները բերեց դեսպանին և հաջողություններ մաղթեց նրան իր առաքելության մեջ: Կարևորելով երկու պետությունների միջև հաստատված բարեկամական հարաբերությունները՝ Հայոց Հայրապետը վերհիշեց արցախյան գո-

յապայքարի սկզբնավորման օրերին հայ ժողովրդին լատվիացիների ցուցաբերած զորակցությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ նաև Լատվիայի իշխանությունների՝ հայ համայնքի համդեպ դրսևորվող հոգատար վերաբերմունքին՝ նկատելով, որ լատվիական համայնքն ակտիվ ներգրավված է երկրի հասարակական կյանքում և կարևոր առաքելություն ունի երկու երկրների փոխհարաբերությունների զորացման գործում: ➔ էջ 2



Հայաստանում Լատվիայի դեսպանին

← էջ 1

Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակին, Ադրբեջանի կողմից շարունակվող ոտնձգություններին, Հայաստանի առջև ծառացած անվտանգային, Արցախից բռնի տեղահանված հայորդիների արդար իրավունքների պաշտպանության, գերիների վերադարձման, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներին՝ հույս հայտնելով, որ միջազգային համրության և բարեկամ երկրների գոր-

ծուն աջակցությամբ հայ ժողովուրդը կկարողանա պաշտպանել իր արդար իրավունքները:

Դեսպան Էդիթ Մեդեն ևս անդրադարձ կատարեց բարեկամական երկկողմ հարաբերություններին և դրանց ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքներին: Դեսպանը կարևորեց առանց բռնի ուժի կիրառման երկխոսության միջոցով, տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատումը, ինչպես նաև տեղահանված արցախցիների լիարժեք ինտեգրումը Հայաստանում:

Նորաստեղծ սարկավագներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում

սպասավորող նորաստեղծ սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի լուսարա-

րպետ Ս. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի: Վեհափառ Հայրապետը, իր գնահատանքն ու հայրապետական պատգամը փոխանցելով նորաստեղծներին, մաղթեց երջանկություն, սեր ու կարեկցություն միմյանց

հանդեպ: Նորին Սրբությունը նաև հորդորեց վերջիններիս ապրել ավետարանական ոգով, որպեսզի աստվածային խաղաղությունն ու սերը մշտապես անպակաս լինեն իրենց նորակազմ ընտանիքներին:

Փետրվարի 15-ին

Միացյալ Թագավորության Համայնքների պալատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միացյալ Թագավորության հորիզոնական Համայնքների պալատի անդամ սըր Ջոն Ուիթինգթեյլի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաև Մեծ

միջազգային համրության կողմից առարկայական ջանքերի գործադրումը Ադրբեջանի ռազմատենչ և ծավալապաշտական նկրտումների կասեցման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր



Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձ կատարեց Հայաստանի առջև ծառացած անվտանգային հիմնախնդիրներին, Արցախից բռնի տեղահանված հայորդիների իրավունքների պաշտպանության, գերիների վերադարձման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության անխաթար պահպանման հարցերին:

Նորին Սրբությունը ցավով արձանագրեց, որ հակառակ բանակցային գործընթացին՝ Ադրբեջանը շարունակում է Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ ոտնձգությունները, սահմանին տեղ են գտնում սադրիչ գործողություններ, որոնց հետևանքով զոհվում և վիրավորվում են քաջարի հայորդիներ: Առկա իրադրության մեջ Հայոց Հայրապետը կարևորեց

գնահատանքը բերեց ներկաներին Հայաստանի հիմնախնդիրների հանդեպ ուշադրության և բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության գործում ցուցաբերած զորակցության համար:

Իր հերթին սըր Ջոն Ուիթինգթեյլը Նորին Սրբությանը տեղեկացրեց Ջերմուկ քաղաք պատվիրակության այցի և Արցախից բռնի տեղահանվածների ընտանիքների հետ հանդիպման տպավորությունների մասին, անդրադարձ կատարեց հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք առնչվում էին Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին, Հայաստանյայց Առաքելական և քույր Եկեղեցիների փոխհարաբերություններին, ինչպես նաև տարբեր ոլորտներում Հայոց Եկեղեցու գործունեությանը:

Քահանայական ձեռնադրություն

Փետրվարի 3-ին, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Հընթացս սուրբ և անմահ պատարագի, ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ս. Օշական եպս. Գյուլգյուլյանի, քահանայական ձեռնադրության և օծման արժանացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում սպասավորող տասնմեկ սարկավագ: Պատարագի սրբազան արարողության ընթացքում Օշական սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ սրբալույս մյուռնով օծելով քահանաների ճակատներն ու ձեռքերը և շնորհելով նրանց հոգևոր նոր անուններ: Արտակ սրկ. Ղևոնդյանը վերակոչվեց Ս. Կոմիտաս քահանա, Դավիթ սրկ. Հայրապետյանը՝ Ս. Վարդան քահանա, Դավիթ սրկ. Հայրապետյանը՝ Ս. Ղևոնդ քահանա, Գևորգ սրկ. Միրզոյանը՝ Ս. Արտակ քահանա, Լորիս սրկ. Անդրեասյանը՝ Ս. Վազգեն քահանա, Նարեկ սրկ. Թորգոմյանը՝ Ս. Հովհաննես քահանա, Անդրանիկ սրկ. Միմասյանը՝ Ս. Գրիգոր քահանա, Սամվել սրկ. Բաղդասարյանը՝ Ս. Սեպուհ քահանա, Սևակ սրկ. Գրիգորյանը՝ Ս. Եսայի քահանա, Ռոբերտ սրկ. Ոսկանյանը՝ Ս. Ոսկան քահանա, և Գարիկ սրկ. Հովհանյանը՝ Ս. Ղուկաս քահանա: Ձեռնադրության ավարտին նորած քահանաներն իրենց



անդրանիկ օրհնությունը փոխանցեցին հավատացյալներին:

Այնուհետև ձեռնադրող սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով քահանայության կարևորությանը, մաղթեց նորընծաներին, որ իրենք իրենց կարգի մեջ լինեն հավատարիմ և ծառայասեր հոգևորականներ. «Սիրելի նորընծաներ, ձեր առաքելությունը շուտով պետք է սկսվի.

եղեք քաջ հովիվներ, մատուցեք ձեր ծառայությունը Հայ Եկեղեցուն և ժողովրդին՝ մանավանդ այս օրերին, երբ տարբեր տեսակի փորձություններ ու դժվարություններ կան մեր շուրջը: Եղեք արթուն և զորավոր, ծառայեք մեր ժողովրդին. մեր ժողովուրդն ավելի, քան երբևէ կարոտն ունի ձեր խոսքի, ձեր աղոթքի և ձեր մխիթարության: ...Քրիստոսի խոսքը ձեզ համար թող

լինի ձեր վահանը, ձեր սուրը և ձեր խաչը, որպեսզի կարողանաք ամբողջամբար ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն»,– ասաց Օշական սրբազանը՝ հորդորելով հավատացյալներին աղոթք բարձրացնել առ Աստված նաև նորընծա քահանաների համար, որպեսզի նրանք իրենց կարգի մեջ մնան ամուր և հաստատ:

Սրբազան հայրը նաև իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ քահանայական ձեռնադրություն կատարելու հնարավորության ընձեռման համար: Ապա Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասն Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ բարձրացան Սուրբ Խորան, շնորհավորեցին քահանաներին և համբուրեցին վերջիններիս մյուռնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջույն»-ը:

Նույն օրը՝ երեկոյան, Սուրբ Գայանե վանքում կատարվեց վեղարի տվչության արարողություն: Ս. Հովհաննես, Ս. Գրիգոր, Ս. Եսայի, Ս. Ոսկան և Ս. Ղուկաս քահանաները վեղար ստացան ու համալրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը: Նորած քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասունօրյա պատաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

